

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ընթերցողի դատին ներկայացված սույն աշխատության՝ գրքի և լազերային սկավառակի լույս ընծայումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական լայնածավալ բարեփոխումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որոնց նպատակը մարդու ազատությունների և իրավունքների երաշխավորված պաշտպանությունն է: Ցավոք, քրեական դատավարության օրենսդրության անկատարությունը երբեմն թույլ է տալիս «օբյեկտիվորեն» ոտնահարել մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Քրեական դատավարության օրենսդրության բացերի և թերությունների վերացման անհրաժեշտության հրամայականը նույնպես պայմանավորել է նմանատիպ աշխատության ծնունդը, որը նպատակ ունի՝

– Հստակեցնել այն հակասական իրավական դաշտը, որն առաջացել է 1999թ. հունվարի 12-ից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության մեջ մտնելու հետևանքով, և տեսության ու պրակտիկայի պահանջների տեսանկյունից լուսաբանել այնպիսի իրավական հասկացություններ, ինչպիսիք են քրեական գործով մինչդատական վարույթը, նախնական քննությունը, հետաքննությունը և նախաքննությունը, դատավարական, մասնավորապես քննչական գործողությունները, դատավարական փաստաթղթերը և այլն: Քրեական գործով մինչդատական վարույթի կարևորագույն փուլ է նախնական քննությունը, որի հետ կապված են տեսական հիմնավորում պահանջող բազմաթիվ հարցեր:

– Ստեղծել քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կազմվող դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշների մեկ ամբողջական համակարգ: Հանրապետության տարբեր գերատեսչությունների քննչական ապարատների և հետաքննության մարմինների աշխատակիցները, առաջին հերթին՝ սկսնակները, բախվում են դժվարությունների այս կամ այն դատավարական գործողության կապակցությամբ որոշում, արձանագրություն, դատավարական այլ փաստաթուղթ կամ ուղեկցական նամակ կազմելիս: Իրավաբանական գրականության մեջ և պրակտիկայում անընդհատ խոսվում է քրեական գործով մինչդատական վարույթի դատավարական փաստաթղթերի ձևաթղթերի (բլանկների) միասնականացման և դրանց որակի բարձրացման մասին: Նախաքննության տարբեր մարմինների կողմից անկազմակերպ և չհամաձայնեցված կարգով նախապատրաստված և ներկայումս գործածության մեջ գտնվող դատավարական փաստաթղթերի միմյանցից տարբերվող ձևաթղթերը թերի են ոչ միայն ձևակերպման, այլ նաև օրենքի պահանջների պահպանման առումով:

«Քրեական գործով մինչդատական վարույթ», հասկացությունը ներառվել է մայրցամաքային Եվրոպայի երկրների փորձից, որտեղ քրեական դատավարությունը բաժանված է իրավական նշանակությամբ 2 հավասար մասերի՝ մինչդատական վարույթ (նախնական քննություն) և դատաքննություն: Ընդ որում քրեական գործով մինչդատական վարույթը բաղկացած է ոչ միայն դատավարական գործողություններից, այլ նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Քրեական գործով մինչդատական վարույթ» վերնագրով 8-րդ բաժինը իր մեջ ընդգրկում է քրեական գործի հարուցման կարգը, նախնական քննություն կատարելու ընդհանուր պայմաններն ու դատավարական գործողությունների իրականացման կարգը սահմանող դրույթներ: Հիշյալ դրույթները ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքում (ընդունված 07.03.1961թ.) ներկայացված էին «Քրեական գործի հարուցումը» և «Հետաքննություն և նախաքննություն»՝ համապատասխանաբար՝ 2-րդ և 3-րդ հատվածներում: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս որ «քրեական գործով մինչդատական վարույթ»-ը իր ծավալով համապատասխանում է նախկին օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածին, որն սկսվում էր հանցագործության վերաբերյալ հաղորդման առթիվ նյութերի նախապատրաստումից և ավարտվում մեղադրական եզրակացությամբ կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար քրեական գործը

դատարան ուղարկելու մասին որոշում կամ քրեական գործը կարճելու մասին որոշում կազմելով: Թեև, գործող Օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ կետը ակնհայտ թերի է բացատրել «քրեական գործով մինչդատական վարույթ» նորամույժ հասկացությունը՝ այն բնորոշելով որպես քրեական գործով վարույթ՝ քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը: Մինչդեռ հայտնի է, որ քրեական գործերի մի մասը կարող են վարույթով կարճվել քննիչի կամ դատախազի կողմից, ինչով էլ նույնպես ավարտվում է մինչդատական վարույթը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը առատ է ոչ միայն դրանում տեղ գտած հասկացությունների՝ հիշյալ թերի բացատրության նման բացթողումներով, այլև օրենսդրական բացերով, միմյանց, ՀՀ Սահմանադրության և այլ օրենսդրական ակտերի պահանջներին հակասող դրույթներով: Քրեական դատավարության օրենսդրության անկատարելիության պայմաններում ակնհայտ զգացվում է քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում իրականացվող քննչական գործողությունների և կազմվող դատավարական փաստաթղթերի բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Ձգտելով ինչ-որ չափով լրացնել այս բացը՝ հեղինակը առաջին անգամ համալիր մոտեցում է ցուցաբերել քննչական գործողությունները համակարգելիս և դրանց իրականացման կարգը լուսաբանելիս, դատավարական փաստաթղթերը տեսակավորելիս և դրանց կազմմանը ներկայացվող պահանջները վերլուծելիս:

Հետազոտության համար ելակետային հիմք են հանդիսացել քրեական գործով մինչդատական վարույթը կարգավորող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, որոնց վերլուծությունը խարսխված է հեղինակի գիտական պրպտումների և բացառապես նրա երկարամյա պրակտիկ գործունեության արդյունքների վրա: Քրեական դատավարական գործող օրենքին համապատասխան՝ քննչական բոլոր գործողությունները ներկայացվել են մեկ համակարգում, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի բոլոր դատավարական փաստաթղթերը տեսակավորվել են ըստ հատկանիշների: Լուսաբանվել և մեկնաբանվել են օրենսդրական այն դրույթները, որոնց հետ քրեական վարույթն իրականացնող մարմինը մշտապես առնչվում է իր ամենօրյա դժվարին աշխատանքում: Մեկնաբանությունները ուղեկցվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բացերի և հակասական դրույթների վերհանմամբ, մասամբ՝ կոնկրետ առաջարկությունների ներկայացմամբ: Միաժամանակ, ՀՀ և ՌԴ քրեական դատավարության օրենսգրքերի (ընդունվել են համապատասխանաբար՝ 01.07.1998թ. և 22.11.2001թ.) համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջինը երկրորդի 1998թ. նախագծային տարբերակի անհաջող թարգմանությունն է՝ հայոց լեզվին օտար և խրթին իմաստային ձևակերպումներով, շատ դեպքերում՝ բառերի բացթողմամբ կամ անհարկի կրկնություններով:

Հանրահայտ է, որ քննիչը, քրեական վարույթն իրականացնող մյուս մարմինները աշխատաժամանակի գերակշիռ մասը ծախսում են գրագրության հետ կապված գործընթացի վրա: Մինչդեռ նախնական քննության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է քննիչի արագ և օպերատիվ գործողություններով, որն էլ իր հերթին ենթադրում է աշխատանքի ճիշտ կազմակերպում: Նպատակադրվելով մասնակիորեն լուծել սույն հիմնախնդիրները՝ հեղինակը փորձ է արել ստեղծել մի աշխատություն, որը սեղանի գիրք և յուրատեսակ օգնական դառնա նախաքննության ու հետաքննության մարմինների աշխատակիցների համար: Գրքի երկրորդ մասում և կից ներկայացվող լազերային սկավառակում արտացոլված են քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ավելի քան 200 դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշներ: Ավելի հարմար օգտագործման համար դրանք բաժանվել են 13 գլուխների, իսկ դրանցում առկա փաստաթղթերը՝ համարակալվել: Գրքի՝ նմուշներն ամփոփող յուրաքանչյուր գլխի վերնագիր համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հատուկ մասի «Քրեական գործով մինչդատական վարույթ» բաժնի

գլուխների վերնագրերին: Աշխատանքն առավել օգտակար, հասկանալի դարձնելու (օպտիմալացման) նպատակով խմբավորվել են նույն բնույթի մի շարք քննչական գործողություններ, որոնք օրենսգրքում անհարկի տեղաբաշխված են առանձին գլուխներում: Այսպես, ճանաչման ներկայացնելը խմբավորվել է հարցաքննության և առերեսման հետ (5-րդ գլուխ), քննչական փորձարարությունը՝ զննման, արտաշիրմման և քննման հետ (6-րդ գլուխ), իսկ հետազոտման համար նմուշներ ստանալը՝ փորձաքննություն կատարելու հետ (9-րդ գլուխ):

Խնդիր չի դրվել շարադրել այս կամ այն դատավարական փաստաթղթի նկարագրական մասն ամբողջությամբ, որպեսզի չձանրաբեռնվեն օրինակելի նմուշները, և դրանց օգտագործումը դառնա դյուրին ու մատչելի: Հեղինակը, հավատարիմ մնալով պրակտիկ աշխատանքի փորձին ու մեթոդներին՝ նախապատրաստել և առաջարկել է դատավարական փաստաթղթերի այնպիսի օրինակելի նմուշներ, որոնք գերծ են կրկնություններից, ավելորդ վավերապայմաններից (ռեկվիզիտներից): Դրանով՝ բերված օրինակելի նմուշների կառուցվածքն ու վավերապայմանների շարադրանքը էականորեն տարբերվում են ներկայումս գործածության մեջ գտնվող դատավարական փաստաթղթերի ձևաթղթերից, որոնց տեսակների ընդհանուր թիվը չի գերազանցում աշխատությունում արտացոլված դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշների երկու երրորդը: Դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշները նախապատրաստվել են ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերի պահանջների պահպանմամբ՝ հաշվի առնելով դրանց օգտագործման հնարավորությունը՝ կախված կոնկրետ դեպքից և իրականացվող դատավարական գործողությունից:

Միաժամանակ աշխատությունում չեն արտացոլվել այն դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշները, որոնք պրակտիկայում հազվադեպ են հանդիպում կամ ընդհանրապես չեն հանդիպում: Օրինակ, որոշում տուժողի կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ և 99-րդ հոդվածներ), արձանագրություն անձին՝ ճանաչվողի տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելու վերաբերյալ (221-րդ և 224-րդ հոդվածներ) և այլն:

Առաջնորդվելով դատավարական փաստաթղթերը առավել հասկանալի ու մատչելի դարձնելու գաղափարով, միտումնավոր անտեսելով դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների պարզաբանման առիթով արձանագրություններ կազմելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ հեղինակը դատավարական գործողության կատարումը արտացոլել է դատավարության այս կամ այն մասնակցի՝ որպես այդպիսին ճանաչելու մասին որոշման մեջ՝ կազմելով երկուսի փոխարեն մեկ դատավարական փաստաթուղթ: Օրինակ, «Տուժող ճանաչելու մասին որոշման» օրինակելի նմուշում բերվել է նաև տուժողի իրավունքների և պարտականությունների ցանկը, որը չի հակասում օրենքի պահանջին:

Աշխատությունն ունի գիտագործնական բազմանպատակային նշանակություն: Այն հայ իրավագիտության մեջ առաջին աշխատանքն է, որում միավորված են քրեական գործով մինչդատական վարույթին վերաբերող օրենսդրական դրույթների լուսաբանումն ու համապատասխան դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշները: Ընդ որում անձնական համակարգչի միջոցով սույն գրքին կից լազերային սկավառակի կիրառմամբ դատավարական փաստաթղթերի նախապատրաստման վրա կատարվող աշխատաժամանակի կրճատման շնորհիվ կարելի է էականորեն բարձրացնել հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցների գործունեության արդյունավետությունը, որակն ու աշխատանքի կուլտուրան: Աշխատությունն արժևորվում է հատկապես քննչական ապարատի աշխատակիցների համար: Դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշները կօգնեն պրակտիկ աշխատողներին քրեադատավարական օրենքով սահմանված ձևի և բովանդակության

տեսանկյունից ճիշտ և արագ կազմել մինչդատական վարույթի այս կամ այն դատավարական փաստաթուղթը:

Հանրապետության երեք տարբեր գերատեսչությունների՝ դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների քննչական ապարատներում աշխատող քննիչներն իրականացնում են քրեադատավարական նույն օրենքով սահմանված գործառույթները և ղեկավարվում մեկ ընդհանուր ընթացակարգով: Քրեական գործով մինչդատական վարույթի դատավարական փաստաթղթերի միասնականացումը օրվա հրամայականն է: Այդ առումով, հետագայում քննչական վերոհիշյալ ապարատների կառուցվածքներում նույնիսկ էական և գործառութային (ֆունկցիոնալ) փոփոխություններ կատարելու դեպքում սույն աշխատությունը չի կորցնի իր արդիականությունը:

Դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշներում բերված անձանց, կազմակերպությունների, բնակավայրերի, դեպքի վայրի, ժամանակի վերաբերյալ և այլ տվյալներ կրում են պայմանական բնույթ: Օրինակելի նմուշներում գրեթե չկրկնվող ազգանունները, անուն-հայրանունները քաղված են հայոց ազգանունների, անձնանունների բառարաններից, որոնք նշված են օգտագործված գրականության ցանկում: Անհրաժեշտ հասկացությունը կամ դատավարական փաստաթղթի օրինակելի նմուշը դյուրին գտնելու նպատակով ընթերցողին առաջարկվում է նաև այբբենական-առարկայական ուղեցույց, որը հղումներ է պարունակում գրքի համապատասխան էջերին:

Սույն հետազոտության արդյունքների ամփոփման նպատակն է. ա) հենք ստեղծել դատավարական փաստաթղթերի կազմման, դրանց ձևաթղթերի միասնականացման համար, բ) ձևավորել առաջարկությունների փաթեթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ընդհանրապես քրեական դատավարության օրենսդրությունում հնարավոր փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում ՀՀ իրավապահ մարմինների այն աշխատակիցներին ու բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբան դասախոսներին, որոնք իրենց խորհուրդներով և բարեմաղթանքներով օգնել են սույն աշխատության նախապատրաստմանն ու հրատարակմանը:

Չհավակնելով աշխատանքն անթերի համարելուն՝ հեղինակը երախտագիտությամբ կընդունի ընթերցողների կարծիքները, դիտողություններն ու առաջարկությունները, որոնք կարելի է ուղարկել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ՝ ք.Երևան, Արամի 44: